## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2017 թվականի N 41

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքի ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1.Այգավան համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ. Լ.Սահակյան /

2. Այգավան համայնքին պատկանող 0062-0006 ծածկագրի 0.0304հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի մասին:

/Զեկ. Մ. Դավթյան /

3. Այգավան համայնքին պատկանող 03-008-0790-0005 ծածկագրի 0.0186 հա բնակավայրի կառուցապատման հողամասի մասին:

/Զեկ. Մ. Դավթյան /

4. Այգավան համայնքին պատկանող 03-008-0649-0002 ծածկագրի 0.03047հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի մասին:

/Զեկ. Մ. Դավթյան /

5. Այգավան համայնքի սեփականության գույքի գույքագրման արդյունքների հաստատման մասին:

/Զեկ. Լ.Սահակյան /

6. Այգավան համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների մասին:

/Զեկ. Մ. Դավթյան /

Կողմ – 7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ

3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ

4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2017 թվականի N 42-Ն

## ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. 11-01-02-51 Այգավան համայնքի պահուստ 4891 հոդվածից 500.0 հազար դրամ տալ 01-01-01-51 կառավարման մարմնի պահպանում 4212 հոդվածին, ճշտված պլանը սահմանել 3000.0 հազար դրամ:
2. 11-01-02-51 Այգավան համայնքի պահուստ 4891 հոդվածից 1000.0 հազար դրամ տալ, 06-06-01-55
Ջրային կառույցների պահպանում 4212 հոդվածին, ճշտված պլանը սահմանել 18001.218 հազար դրամ:
3. 11-01-02-51 Այգավան համայնքի պահուստ 4891 հոդվածից 250.0 հազար դրամ տալ 06-06-01-55 ջրային կառույցների պահպանում 4213 հոդվածին, ճշտված պլանը սահմանել 1450.0 հազար դրամ:
4. 11-01-02-51 Այգավան համայնքի պահուստ 4891 հոդվածից 90.0 հազար դրամ տալ 01-01-01-51 կառավարման մարմնի պահպանում 4252 հոդվածին, ճշտված պլանը սահմանել 990.0 հազար դրամ:
5. 11-01-02-51 Այգավան համայնքի պահուստ 4891 հոդվածից 100.0 հազար դրամ տալ 09-04-01-55 կարիքավոր ընտանիքների բարձրագույն կրթություն ստացող երեխաներ 4239 հոդվածին, ճշտված պլանը սահմանել 2320.0 հազար դրամ:

6. 11-01-02-51 Այգավան համայնքի պահուստ 4891 հոդվածից 90.0 հազար դրամ տալ 01-01-01-51 Կառավարման մարմնի պահպանում 4264 հոդվածին, ճշտված պլանը սահմանել 990.0 հազար դրամ:
7. 11-01-02-51 Այգավան համայնքի 4891 հոդվածից 500.0 հազար դրամ տալ 08-02-03 մշակույթի տների հիմնանորոգում 4264 հոդվածին, ճշտված պլանը սահմանել 500.0 հազար դրամ:

Կողմ – 7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

29 նոյեմբերի 2017 թվականի N 43

## ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0062-0006 ԾԱԾԿԱԳՐԻ 0.0304ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ և 21-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ նախագահի 01.06.2010 թվականի 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67 հոդվածի 2 և 3 կետերով , ինչպես նաև 68-րդ հոդվածով.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Արարատի մարզի Այգավան համայնքի կադաստրային քարտեզի 0062-0006 ծածկագրի Արարատյան 22/1 հասցեի 0.0304 հա բնակավայրի բնակելի կառուցապատման, համայնքի սեփականություն հանդիսացող և որպես <<անհայտ>> քաղաքացու սեփականություն փոխանցված հողամասի նկատմամբ ճանաչել համայնքի սեփականության իրավունքը:
2. Արարատի մարզի Այգավան համայնքի սեփականություն հանդիսացող Արարատյան 22/1 հասցեի 0062-00006 ծածկագրի 0.0304 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդով, մեկնարկային գինը սահմանել հողի կադաստրային աժեքի չափով:

Կողմ – 7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ

3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ

4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2017 թվականի N 44

## ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 03-008-0790-0005 ԾԱԾԿԱԳՐԻ 0.0186 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի 912-Ն որոշումով և Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ նախագահի 01.06.2010 թվականի 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Արարատի մարզի Այգավան համայնքի կադաստրային քարտեզի 03-008-0790-0005 ծածկագրի Ազատամարտիկների 21 հասցեի 0.0186 հա բնակավայրի բնակելի կառուցապատման, համայնքի սեփականություն հանդիսացող և որպես <<անհայտ>> քաղաքացու սեփականություն փոխանցված հողամասի նկատմամբ ճանաչել համայնքի սեփականության իրավունքը և որպես Ջանիկ Խաչիկյանի կողմից ինքնակամ զավթած տարածք օրինականացնել:
2. Առաջարկել Ջանիկ Խաչիկյանին գնել Արարատի մարզի Այգավան համայնքի Ազատամարտիկների 21 հասցեի 03-008-0790-0005 ծածկագրի 0.0186 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը իր կադաստրային արժեքով՝ 0.0186 հա X 810 = 150660 դրամ (մեկ հարյուր հիսուն հազար վեց հարյուր վաթսուն):
3. Կատարել պետական գրանցում և համապատասխան ուղղում համայնքի հողի հարկի բազայում:

Կողմ – 7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ

3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ

4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2017 թվականի N 45

### ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 03-008-0649-0002 ԾԱԾԿԱԳՐԻ 0.03047ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետերով, 66-րդ հոդվածի 2-րդ կետով, ինչպես նաև 72-րդ հոդվածի 2-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Արարատի մարզի Այգավան համայնքի սեփականություն հանդիսացող Գետամիջի 2/5 հասցեի, 03-008-0649-0002 ծածկագրի, 0.03047 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը ուղիղ վաճառքով տրամադրել Արարատի մարզի Այգավան համայնքի բնակիչ Էմմա Հարությունյանին՝ գինը սահմանել հողամասի կադաստրային գնի չափով՝ 0.03047 X 810 = 246.807 դրամ:
2. Կատարել պետական գրանցում և ուղղում հողի հարկի բազայում:

Կողմ – 7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ

3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ

4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2017 թվականի N 46

### ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32 կետով.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքում 2018 թվականի համար սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի.

Կողմ – 7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2017 թվականի N 47-Ն

## ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12 և 14-րդ հոդվածներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքում 2018 թվականի համար սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի.

Կողմ – 7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի Այգավան համայնքի
Ավագանու 29.11.2017 թվականի թիվ 46 որոշման

# ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ
# ՑՈՒՑԱԿ

Գույքագրման անցկացման հիմքը

(համար և ամսաթիվ) N 24 09.11.2017թ.

(Հրաման, որոշում, կարգադրություն)

Գույքագրումը սկսելու ամսաթիվը 09.11.2017թ

Գույքագրումն ավարտելու ամսաթիվը 14.11.2017թ

Հիմնական միջոցներ

Գտնվելու վայրը ի. Այգավան

Գույքագրման սկզբում հիմնական միջոցների մուտքի և ելքի բոլոր փաստաթղթերը հանձնված են հաշվապահություն: Իմ (մեր) պատասխանատվությամբ ստացված բոլոր հիմնական միջոցները մուտքագրված են , իսկ բաց թողնվածները՝ ելքագրված:

| Հերթական համար | Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը | Թողարկման (կառուցման) ամսաթիվը | Համարը | | | Փաստացի առկայությունը | | Հաշվապահական հաշվառման տվյալները | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Գույքային | Գործարանային | Անձնագրի | քանակը | Արժեքը (դրամ) | քանակը | Արժեքը (դրամ) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | | | | | | | | | |
| 1 | Համայնք. շենք | | | | | | | 1 | |
| 2 | Մշակ. տուն | | | | | | | 1 | |
| 3 | Ավտո.Word focus | | | | | | | 1 | |
| 4 | Խորհրդակցական սեղան | | | | | | | 1 | |
| 5 | Գրասեղան | | | | | | | 1 | |
| 6 | Կաշվից բազկաթոռ | | | | | | | 1 | |
| 7 | Կաշվից աթոռ | | | | | | | 2 | |
| 8 | Փայտից աթոռ | | | | | | | 10 | |
| 9 | Գրապահարան | | | | | | | 1 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Դրոշ | | | | | | | 1 | |
| 11 | Սեղանի հեռախոս | | | | | | | 1 | |
| 12 | Ջահ | | | | | | | 2 | |
| 13 | Գրասեղան | | | | | | | 1 | |
| 14 | Գրասենյակային կաշվից բազկաթոռ | | | | | | | 1 | |
| 15 | Աթոռ | | | | | | | 2 | |
| 16 | Գրասեղան | | | | | | | 2 | |
| 17 | Աթոռ փայտից | | | | | | | 3 | |
| 18 | Աթոռ կաշվից | | | | | | | 1 | |
| 19 | Պահարան չհրկիզվող և հրկիզվող | | | | | | | 2 | |
| 20 | Էլ. ջեռուցիչ | | | | | | | 1 | |
| 21 | Կախիչ | | | | | | | 1 | |
| 22 | Հայելի | | | | | | | 1 | |
| 23 | Գրասեղաններ | | | | | | | 5 | |
| 24 | Համակարգիչներ | | | | | | | 3 | |
| 25 | Աթոռ փայտից | | | | | | | 7 | |
| 26 | Բազմոց | | | | | | | 1 | |
| 27 | Պատ պահարան | | | | | | | 1 | |
| 28 | Չհրկիզվող պահարան | | | | | | | 2 | |
| 29 | Աթոռներ կաշվից | | | | | | | 2 | |
| 30 | Էլ. Վառարաններ | | | | | | | 3 | |
| 31 | Ժամացույց | | | | | | | 1 | |
| 32 | Սեղան լրագրի | | | | | | | 1 | |
| 33 | Գրասեղան | | | | | | | 1 | |
| 34 | Հագուստի պահարան | | | | | | | 1 | |
| 35 | Օֆիսի բազմոց | | | | | | | 1 | |
| 36 | Աթոռ | | | | | | | 1 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Բազմոց, բազկաթոռներ | | | | 1 | | 1 | | |
| 39 | Խմելու ջրի սառեցման ապարատ | | | | 1 | | 1 | | |
| 40 | Հեռուստացույց SAMSUNG PS42b450b1 | | | | 1 | | 1 | | |
| 41 | ՏեսախցիկHD5c2el | | | | 4 | | 4 | 28000 | |
| 42 | ՏեսախցիկHD5cly | | | | 2 | | 2 | 45000 | |
| 43 | Ձայնագրող սարք DVRcly | | | | 1 | | 1 | 80500 | |
| 44 | Կոշտ սկավառակ2T | | | | 1 | | 1 | 79000 | |
| 45 | Պլաստմասե աթոռ մետաղական ոտքերով | | | | 13 | | 13 | 95004 | |
| 46 | Պլաստմասե սեղան | | | | 3 | | 3 | 105000 | |
| 47 | Տպիչ CANON MF211 | | | | 2 | | 2 | 290000 | |
| 48 | Տեսախցիկ | | | | 1 | | 1 | 35000 | |
| 49 | Տեսախցիկի ամրակ | | | | 7 | | 7 | 49000 | |
| 50 | Վառարան canon 3220 | | | | 1 | | 1 | 25000 | |
| 51 | Բջջային հեռախոսV17 | | | | 1 | | 1 | 30000 | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |

Հանձնաժողովի նախագահ
Աշխատակազմի քարտուղար ______________ Ս.Դավթյան
(պաշտոնը) (ստորագրություն) (ա ա)

Հանձնաժողովի անդամներ
Մշակույթի տան տնօրեն ______________ Հ.Մինասյան
(պաշտոնը) (ստորագրություն) (ա ա)

Առաջատար մասնագետ ______________ Կ.Գրիգորյան
(պաշտոնը) (ստորագրություն) (ա ա)

Գույքագրման ցուցակում N1 ից մինչև N 51- ը թվարկված բոլոր հիմնական միջոցների փաստացի առկայությունը ստուգված և ցուցակում գրանցված է իմ (մեր ) ներկայությամբ, որի հետ կապված գույքագրման հանձնաժողովի նկատմամբ ոչ մի բողոք չունեմ (չունենք): Ցուցակում նշված հիմնական միջոցները գտնվում են իմ (մեր ) պատասխանատու պահպանության ներքո:
Հիմնական միջոցների պահպանման համար
Ցուցակում նշված տվյալները և
հաշվարկները ստուգեց

Գլխավոր հաշվապահ ______________ Լ.Սահակյան
(պաշտոնը) (ստորագրություն)

Համայնքի ղեկավար ______________ Վ.Հարությունյան
(ստորագրություն)

Հավելված 2

ՀՀ Արարատի մարզի Այգավան
համայնքի ավագանու 2017 թվականի
29 նոյեմբերի թիվ 47-Ն որոշման

# ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնքում 2018թ-ի համար սահմանել հետևյալ տեղական տուրքերի դրույքաչափեր.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ:

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ:
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ:
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ:
- 3000 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 դրամ:

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000դրամ:
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը` շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար` 5000 դրամ

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար` օրացուցային տարվա համար` 200000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար` օրացուցային տարվա համար` 60000 դրամ:

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար` օրացուցային տարվա համար` 50000 դրամ

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար`

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար` յուրաքանչյուր եռամսյակի համար`

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 10000 դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 13000 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 15000 դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 21000 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 30000 դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ:

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 50000 դրամ:

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100000 դրամ:

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 500000 դրամ:

դ. խաղատների համար՝ 1000000 դրամ:

ե. շահումով խաղերի համար՝ 500000 դրամ:

զ. վիճակախաղերի համար՝ 150000 դրամ:

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 դրամ:

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ:
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ.

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ:

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ:

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ:

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 375 դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ 150 դրամ.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ:

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 դրամ

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500000 դրամ:

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ:

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ:

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 դրամ:

դ.10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000000 դրամ

16. Սույն որոշման հավելվածով սահմանված դրույքաձափերը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ, բացառությամբ որոշման հավելվածի 1-ից 6 կետերի:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխելու վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10000,

2) շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 15000 դրամ

3) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10000 դրամ

4) համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար կազմված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝

ա) աճուրդի դեպքում 10000դրամ

բ) վարձակալության մրցույթի դեպքում՝ 10000 դրամ

4) Համայնքի տարածքում աղբահանության վճար սահմանել՝

ա) Կենցաղային աղբի համար փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100դրամ:

բ) բնտանիքում երեք և ավելի բնակչի դեպքում աղբահանության վճար սահմանել ամսական 300 դրամ:

գ) իրվաբանական անձանց համար սահմանել

1. Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ ամսական 1քմ. համար 20 դրամ

2.Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար ամսական՝ 1քմ- 4 դրամ

3. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային շինություններ՝ ամսական 1քմ- 2 դրամ:

դ) համայնքի տարածքում աղբահանությունը իրականացնել շաբաթը մեկ անգամ

5) Սահմանել համայնքի ենթակա կազմակերպությունում ծնողական մուծումների հետևյալ դրույքաչափերը՝ <<Ծպիտ>> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում համայնքի բնակիչ յուրաքանչյուր երեխայի համար ամսական՝ 5000 դրամ, այլ համայնքից հաճախող յուրաքանչյուր երեխայի համար 10000:

6) Օգտագործված կենցաղային ջրի համար տեղական վճարը սահմանել ամսական յուրաքանչյուր շնչից 30 դրամ:

7) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճարել 500 դրամ:

8) Արանեա կապի հենասյուններից օգտվելու համար յուրաքանչյուր սյան համար սահմանել տեղական վճար, ամիսը 10 դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ.ԴԱՎԹՅԱՆ